ԱՍՏՈՒԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՈՒՄԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՅԱՆՔՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(22 փետրվարի 1998 թ.)

Հանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն:
«Եկեսցէ արքայութիւն քո»:
«Թող քո թագավորությունը գա»:
(ՄԱՏԹ. Զ 10)

Այս բառերը քիչ առաջ այս սուրբ բեմից կարդացվեցին Մատթեոսի Ավետարանից քաղված, ինչպես աշխարհի բոլոր հայ եկեղեցիների բեմերից: Այսօր բացվում է Հայ Եկեղեցու կյանքում Մեծ Պահքի շրջանը:

Քառասնօրյա պահեցողության այս շրջանում մեր Եկեղեցին հրավիրում է իր բոլոր զավակներին իրենց միտքը, ուշքը ուրիշներից, արտաքին աշխարհից դեպի իրենց ներքին անձերը դարձնելու, սևեռելու, կենտրոնացնելու: Մեծ Պահքի քառասնօրյա շրջանը միայն որոշ տեսակի կերակուրներից հրաժարվելու շրջան չէ, այլ ներքին հոգեկան վերափոխության, ինքնարդարացումի, ինքնաարբադրման, ինքնաբյուրեղացման մի սքանչելի առիթ : Բոլոր շարականները, աղոթքները մեր Եկեղեցում մարդուն ուղղում են դեպի իր ներքին աշխարհը: Մենք առհասարակ մեր սովորական կյանքում բացվում ենք դեպի ուրիշը, դեպի արտաքին աշխարհը: Քիչ անգամ առիթ ենք ունենում մենք մեզ հետ զրույցի նստելու: Մեծ Պահքի շրջանը այն շրջանն է, որ մենք մեզ դիտում ենք մեր ներքին աշխարհի հայելու մեջ, մեր խղճի հայելու մեջ, որ Աստծու ներկայության զգացումն է մեր մեջ: Ո՞ւր եմ ես, ո՞վ եմ ես իմ խղճի հայելու մեջ: Այդ հարցումի բարերար ներգործության ժամանակն է Մեծ Պահքը մեր Եկեղեցու ծիսական համակարգում: Այս շրջանը մեզ համար հոգեկան և մարդկային, ազգային վերանորոգման հիանալի մի առիթ է ընծայում: Եվ այսօրվա Ավետարանի հատվածը, որի մեջ կյանքի այլ հիմնական սկզբունքների շարքում մեր հայրերը ընտրել են Աստվածաշունչ Մատյանից, այն հատվածն է, ուր Հիսուս Իր աշակերտներին սովորեցնում է աղոթել: Հիշում եք, թե ինչպես Իր 12 առաքյալները հարց էին տալիս և խնդրում Հիսուսին, որ իրենց սովորեցնի աղոթելու ճիշտ եղանակը: Իսկ Հիսուս պատասխանում է, որ ցուցադրության, բարեպաշտ երևալու համար չաղոթեն, այլ աղոթեն իրենց ներքին աշխարհում և դառնան զրուցակից, խոսակից Աստուծո հետ, Աստուծո փառաբանության և իրենց էական կարիքների համար թե՛ հոգևոր և թե՛ ֆիզիկական:

Առաջին անգամ Հիսուսի շրթներից այդ բառերը արտաբերվեցին և մինչ օրս միլիոնավոր մարդկանց շրթներին այդ աղոթքը կրկնվում է.

Հայր մեր, որ յերկինս ես,
Սուրբ եղիցի անուն Քո,

Եկեսցէ արքայութիւն Քո (ՄԱՏԹ. 10):

(Թող Քո թագավորությունը գա):

Ի՞նչ էր ուզում ասել Հիսուս, «Թող Քո արքայությունը գա» բառերով: Այն, որ Աստուծո ներկայությունը լինի մղիչ ուժը, առաջնորդող ուժը մեր մարդկային կյանքում: Եթե Աստուծո կամքը չլինի մարդու կամքին առաջնորդ, մարդկանց կամքերը իրար այնպես կբախվեն, որ կյանքը հաճախ կարող է վերածվել դժոխքի՝ ի վերա երկրի:

Հիսուսի կյանքում թագավորության գաղափարը միշտ տիրող գաղափարներից է եղել: Այսպես, օրինակ, Հիսուս ասում է. «Արքայութիւն Աստուծոյ ի ներքս ի ձեզ է» (ՂՈՒԿ. ԺԷ 21): «Աստծու թագավորությունը ձեր ներքին աշխարհի մեջ է»: Երբ մարդիկ իրենց հոգեկան աշխարհի մեջ բյուրեղ են, մաքուր են և Աստուծո պատկերը արտացոլում են, այն ժամանակ աշխարհի բոլոր թագավորությունները խաղաղության, ներդաշնակության և հառաջդիմության մեջ կլինեն: Հիսուս ասում է. «Ո՞ւմ նմանեցուսցուք զԱրքայութիւն Աստուծոյ» (ՄԱՐԿ. Դ 30): «Ինչի՞ նմանեցնենք երկնքի թագավորությունը»: Այն նման է մի մարդու, որ մի սերմ է տնկում, որը աճում է, ուռճանում, ծաղկում, պտղաբերվում և կյանք տալիս: «Ո՞ւմ նմանեցուսցուք զԱրքայութիւն Աստուծոյ»,- ասում է Հիսուս: Նման է մանանեխի հատիկին,- պատասխանում է Ինքը,- Մանանեխի հատիկը փոքրիկ է, գրեթե աննշմարելի, բայց երբ հողի մեջ ընկնի, կմեծանա, հովանի կդառնա մարդկանց:

Այսօր մենք անդրադառնում ենք Քրիստոսի այս բառերին, քանզի ապրում ենք մի այնպիսի շրջանում, երբ զգում ենք, որ Աստծու թագավորության գաղափարը ուժգնորեն պետք է թափանցի այս աշխարհի և մեր երկրի, մեր հասարակական կյանքի մեջ: Մարդիկ հավաքականորեն են ապրում և չկա մարդ, որ հավաքականորեն չապրի, որովհետև ընկերայնությունը, հասարակայնությունը մարդու բնության մեջ է: Մեկ ուրիշ տեղ գրել եմ, թե մարդը մարդ է մարդով, մարդը անհատ՝ ինքն իր իսկ բանտն է: Մարդը հասարակայնություն է, և այս հասարակայնությունը կազմակերպվածություն, կարգավորություն է պահանջում: Եվ պետությունները կոչված են այդ կարգը, ներդաշնակությունը, ներդաշնակության միջից ստեղծագործականությունը, երջանկությունը ապահովելու: Աստծու թագավորության օրենքները Ավետարանում են գրված: Հաճախ մարդիկ հարց են տալիս, թե ինչո՞ւ Հիսուս եկավ և խաղաղություն բերեց, սակայն խաղաղություն չկա աշխարհում: Հիսուս խաղաղության օրենքները բերեց, մենք գործադրո՞ւմ ենք դրանք, ապրո՞ւմ ենք Ավետարանի համաձայն: Պետությունը ինչ անուն էլ որ ունենա՝ թագավորություն, հանրապետություն կամ այլ անուններ, կարգ-կանոն և դրանց մեջ ստեղծագործական առաջընթաց է նշանակում:

Այսօր մենք հայրապետական հատուկ տնօրինությամբ մեր Մայր Տաճարի այս խորանը բաց արեցինք: Սովորաբար այսօր հայ եկեղեցու խորանը 40-օրյա պահեցողության շրջանում փակվում է: Սակայն այսօր բացեցինք այն, քանզի ուզեցինք բանալ մեր ժողովրդի սրտերը այն մեծ դեպքի համար, որ սրանից տասը տարիներ առաջ կատարվեց, երբ մեր ժողովուրդը ուզեց ապրել ինքնակամորեն, իր հայացքին, իր զգացումին, իր ձգտումին համապատասխան: Եվ դա Աստուծո տված շնորհն է, իրավունքը միանգամայն: Այդ ազատության վերագտման և այդ ազատության ապրումի

ընթացքում մեր ազգի կատարած բազում զոհողությունները մենք այսօր Աստծուն ենք մատուցում և հայցում նրանից, որ ընդունի երջանկության երանական կայքերի մեջ հավիտենական խաղաղության մեջ բոլոր նրանց, ովքեր իրենց կյանքը վճարեցին Աստուծո կամքին համաձայն ազատ և անկախ ապրելու համար որպես ամենաթանկ գինը: Թող նրանց հոգիները երկնքում բերկրանք ապրեն, որովհետև տեսնում են, որ տասը տարիներ մենք շարունակ ապրեցինք հավատարիմ այդ կյանքին:

Արցախյան ազատագրության շարժումը սովորական երևույթ չէր, ինչպես այս տոնակատարությանց շաբաթվա առաջին օրը ասացինք: Այսօր, վերջին օրը, մենք կրկնում ենք դա: Այդ տասնամյակը պետք է դառնա ոչ թե միայն դեպի անցյալը նայվածքի պահ, այլ դեպի հառաջ: Մեր նահատակների զոհողությունը մենք պետք է արժեցնենք մեր կյանքով: Հաճախ հռետորական ձևով ասում ենք, թե «գիտենք մեռնել ապրելու համար»: Սակայն ես այսօր ուզում եմ այդ բառերը շրջել՝ մենք պետք է ապրենք ապրելո՛ւ համար: Աստված կյանք է տվել մեզ որպես Իր սիրո բուրմունք: Քրիստոս ասաց. «Ես եկա, որպեսզի դո՛ւք կյանք ունենաք, և առավել կյանք ունենաք» (Հովհ. Ժ 10): Եթե այդ ապրելու համար հարկ լինի մահը՝ կստանձնենք, բայց Աստուծո տվածը կյանքն է, և այդ կյանքը ազատորեն, անկախորեն ու ինքնակամ ձևով արտահայտելու պարտքը Աստված տվել է մեզ և մենք պետք է այդ արժեցնենք մեր Հայրենի հողի վրա՝ լինի Արցախում, լինի մեր Մայր Հայաստանում: Այսօր, երբ մենք տոնում ենք Արցախյան ազատագրական շարժման 10-ամյակը, ես ցանկանում եմ, որ այլևս մենք դառնանք ինքնավստահ և կասկածի տատանման փորձությունից դուրս գանք, որովհետև հավատքով կատարված գործն է հաջողվում: Տասը տարիների փորձով Աստված թող մեզ զորացնի գալիք 10-ամյակների, 100-ամյակների համար: Եվ մենք այսօր, եթե երբեք տոնում ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Արցախյան շարժման տասնամյակը, դա պատշաճության համար չէ. ազատության կրոնը, որ դարձավ մեր ազգի կրոնը Ս. Էջմիածնում, պետք է որ դառնա նոր ներշնչման աղբյուր: Մենք կյանքի պայմաններ ենք ստեղծելու, մեր պետության կողքին ենք կանգնելու և այնպես ենք անելու, որ մեր սեփական ջանքերով բարձրացնենք մեր տնտեսությունը և այլևս դրսից եկած օգնությանը միայն չհառենք մեր նայվածքը: Մենք պետք ունենք այս հողը անկախացնելու՝ այս հողից կյանք հանելով և մեր ընկերային, տնտեսական, մշակութային, կրոնական կյանքով անկախության հիմքերը զորացնելու:

Անկախությունը, եղբայրներ և քույրեր, հռչակագիր չէ միայն, սահմանադրություն չէ միայն: Ե՛վ հռչակագիրը, և՛ սահմանադրությունը անհրաժեշտ են, բայց անկախությունը անկախ ապրելու արժանապատվությունն է՝ երբ դու քո քրտինքով, աշխատանքով կարողանաս դառնալ ինքնանկախ, ինչպես անհատ, նույնպես և իբրև ազգ: Հետևաբար առաջիկա այս շրջանում, երբ մենք պատրաստվում ենք նոր նախագահ ընտրելու իբրև ժողովուրդ, բարձրանանք մտքով և հոգով, գիտակցության բարձրագույն աստիճանի հասնենք, մասնավորություններից, խմբակցային հոգեբանություններից վեր բարձրանանք և իբրև մեկ ազգ մտածենք, որ այս հայրենիքը բոլորիս հայրենիքն է. նա Աստուծո տուրքն է և մեր հայրերի սուրբ ժառանգը, մենք ինչպե՞ս պետք է հաշիվ տանք Նրան և մեր հայրերին: Եթե

այս հողից կյանք չհանենք և մեր արժանապատվությունը չարժեցնենք, մենք Աստուծո թագավորության մի պատառ չենք լինի աշխարհում:

Մենք այդ թագավորության շնչովն ենք ապրելու, դրա համար էլ քրիստոնեական հավատքը եղել է մեր ազգի կենդանության և զորության մշտական ներգործության աղբյուրը: Աշխարհի ոչ մի կրոն մարդ անհատի արժեքը այնքան բարձր չի դասել, որքան քրիստոնեությունը:

Եվ այս քրիստոնեական հավատքի հզորացումը Աստուծո թագավորության՝ մեր հայկական թագավորության մեջ ներշնչողական ուժի վերածումն է մեր էական պարտքը իբրև Եկեղեցի՝ կանգնելով մեր պետության կողքին, որպեսզի ամրանա այս Հայրենիքը ազատ և անկախ՝ իր Արցախով ու համայն արտասահմանյան հայությամբ:

Հետևաբար ես այսօր կրկնում եմ Քրիստոսի բառերը և ասում. «Եկեսցէ Արքայութիւն Քո, եղիցին կամք Քո» (Մատթ. Զ 10)՝ որպեսզի դա այդ թագավորությունը, պետք է կատարվի Աստուծո կամքը և մեր կամքերը ներդաշնակվեն Աստուծո կամքին՝ մեր ազգի պայծառության, մեր Հայրենիքի և Արցախի ամրության, մեր ժողովրդի բարօրության համար, Հավիտյանս հավիտենից. ամեն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

22 փետրվարի 1998
ի Ս. Էջմիածին